ցած (Պատկ. 6), բայց այդքանն էլ այնպիսի գրական փաստ է, որ խնդրի լուսաբանութեան համար աւելի արժէք ունի, քան մի մեծ հատոր տեսական վերլուծութիւն։ Ի՞նչ ձեւ ունէր Պողամանքի գմբեթը, դժուար է մնացորդից կռահել. յամենայն դէպս հիմքը, որ մնացել է դրսից, քառանկիւնի էր։ Եթէ հաստատուէր պեղումներով, որ նա քառանկիւնի էր իւր թմբուկով եւս, ոչ միայն երկրորդ օրինակը կ'ունենայինք Տիկորի գմբեթի, այլ եւ մի կարեւոր փաստ եւս, թէ Ռավեննայի Գալլա Պլացիդիայի (Galla Placidia) դամբարանի գմբեթը ծագումով արեւելեան է, ինչպէս կամենում է ընդունել Ստրչիգովսկին։* Բայց հաւանական չէ այդ Պողամանքի նկատմամբ, այլ պէտք է կարծել որ թմբուկը ութ անկիւնանի է եղել, որ է. դարում ընդհանրացած է մեր մէջ, ինչպէս Ներսէս Կամսարականի Թալինի փոքր եկեղեցին, Աշտարակը** Հերակլ կայսեր 27-րդ տարին, այսինքն 637 թուին։ Գմբեթի փաստական գոյութեան մասին այս ժամանակից էլ աւելի վաղ ապացոյցներ ունինք մոնումենտալ արուեստի մնացորդներով եւ լեզուաբանական տուեալներով։ Այդպիսի մի մնացորդ է մեր աչքում Օձունի տաճարը ինքն ըստինքեան եւ ապա նորա մօտ եղած յուշարձանի մի քանդակազարդական պատկերը։

Կարող է առարկութիւն լինել տաճարի եւ գմբեթի ժամանակակցութեան մասին. յիրաւի նորոգուած է գմբեթի վերարն ու թմբուկը, բայց իւր հիմքերով տաճարի մարմնի հետ այնպիսի ամբողջութիւն է կազմում, նիւթի, կառուցուածքի կողմից, դրսից թէ ներսից, որ բաժանել չենք կարող։ Այդ տիպի եկեղեցիները յատաջ են եկել որպէս գեղարուեստական հոսանքների միացման հետեւանք, եւ ոչ որպէս հեթանոսական հին շէնքի վերայ նոր գմբեթ աւելացնելով, ինչպէս Թորամանեանն է կամենում բացատրել։ Մրենք, որ Թորամանեանը այդպիսի երեւոյթներից մէկն է համարում, է. դարի առաջին կիսի 639 թուականի շէնք է ըստ արձանագրութեան, որի խկատիպը հրատարակել ենք մեր Գրչութեան Արուեստի քարէսի մէջ։* Մեր խկական բազիլիկաները գմբեթ չեն ունեցել, ինչպէս Երերոյքը, Բասարը, Արագածի Աւանը, Ծոփքը։

Ցիշել ենք, որ Օձունի Գերեզմանական կոթողի սիւների արեւելեան եւ արեւմտեան երեսները ծածկուած են պատկերներով եւ զարդաքանդակներով։ Հարաւային սեան արեւելեան երեսին ի միջի այլոց կայ մի բարձր շէնքի պատկեր, խաչազարդ գմբեթով վերջացած։ Լենինգրադի Նիւթական Մշակոյթի Պատմութեան Ակադեմիայում, երբ զեկուցանում էինք այս աշխատութեան մասին, ցուցադրեցինք նաեւ այդ քանդակի լուսանկարն ու էստամբաժը, ակադեմականների յատուկ ուշադրութիւնը խնդրելով, թէ ուղիղ է՞ մեր դիտողութիւնը գմբեթ լինելու նկատմամբ, թէ Ֆրոնտոն կարող է լինել։ Ընդունուեցաւ, որ ճիշդ է մեր դիտողութիւնը։

Բայց գմբեթների հեռաւոր գործածութեան ամենապերճախօս փաստը հայ լեզուի վկայութիւններն են։ Հինգերորդ դարի մեր թարգմանական եւ ինքնուրոյն գրականութեան մէջ գմբեթ բառը գործադրուած է այնքան յաճախ եւ այնպիսի հոլովումներով եւ բարդութիւններով, որ ցոյց է տալիս, թէ այդ գաղափարն ու բառը ամենասովորական հասկացողութիւններ են ժամանակի գրողների եւ թարգմանիչների համար։

Բասեղ Կեսարացու Վեցօրեայ արարչութեան ճառերի թարգմանութեան մէջ, որ հինգերորդ դարի գործ է ընդունուած առանց տարակոյսի, գտնում ենք չատ հետաքրքրական փաստեր բառի եւ նորա գաղափարի մասին.

«զպղպջական, որ փչին բոլորին օդով բատ օրինակի գմբեթացն».—

Ὧν τὴν ἰσχὺν καὶ τὸ μέγεθος οὐδὲν ἡγούμεθα διαφέρειν τῆς κοίλης νοτίδος τῆς ὑπεριλυσωμένης ἐν τοῖς κρουνοῖς. **

Զիա՞րդ ջուրն կացցէ ի վերայ գմբեթայրդ գլխոյն երկնից.—

Πῶς ἂν ἐδυνήθη ἐπὶ τῆς κυρτῆς περιφερείας τοῦ στερεώματος ἱδρυνθῆναι ***

---

*Die Baukunst. 371:

**Պատկերները տես Die Baukunst. 184, 187, 190:

*Տես եւ Strz. Die Baukunst. եր. 43:

**Migne, Patrol. Greca. XXIX. Ὁμιλία Γ. p. 60, 96.

*** Ὁμιλία Γ. p. 57, 89.